

ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԻ ԱՆՀԱՅՏ ՆԿԱՐՉՈՒՀԻ

(Եղեր միջնադարյան նկարչությունից)

բանի Սպահան նահանգի Զարմահալ գավառի «Թատումնասիրաց միության» կենտրոնական վարչության հանձնարարությամբ, 1946 թվականին, շրջովմ եմ նույն գավառի հայարնակ գյուղերը, որպեսզի ուսումնասիրեմ հայ գյուղացիության ազգադրական-տնտեսական կյանքի պատմությունը: Ահա այդ ժամանակ հայարնակ Մամուռան գյուղում, գրասեր Մատթեոս Սբրահամ Տեր-Սուլքահայի խրճիթում, գտնում եմ մեր իմաստուն և խոհուն պապերից ավանդ մնացած մի անհայտ թանկափն ձեռագիր: Դա Գրիգոր վարդապետ Տաթևացու գրական հատորն է, մի գիտնական, որի կյանքի և գործունեության էջերը տանում են ձեզ 14-րդ դարի վերջին շրջանը և 15-րդ դարի առաջին քառորդը: Իր գարագրանում փայլում է նա իր գիտությամբ և ուսուցչական գործունեությամբ: Երկար տարիներ պաշտոնավարում է Ապրակոնիսի, Տաթևի, Մեծոփա ու Սաղմոսա վանքերում և հայ ժողովրդին նվիրում, իր ժամանակի հասկացողությամբ, գիտում և առաջադեմ աշակերտներ: Ուշագրավ է, որ նա իր սաներին ուսուցանում է ո՛չ միայն հարց գրականություն, չեն ու նոր Կոտակարանների մեկնարանություն, այլև վարժեցնում է երաժշտության, ճառասացության և գրչության արվեստներին: Նա հոշակում է նաև իր գրական երկերով— «Գիրք Հարցմանց» (տպ. 1729 թ., Կոստանդնուպոլիս) և «Գիրք քարոզութեան» (տպ. 1741 թ., Կոստանդնուպոլիս): Վերջին հատորում խոսում է նա սիրո, խոհնմության, «հալալ աժուտնութեան», Վասն արդար վաճառաց և


կշուղ», արիության և այլ երկուլիների մասին:

Ահա այդ գոշագրի մի օրինակը բազմել է Մամուռանում, որի մեծությունն է 27×21 սմ., կաշեպատ տախտակյա կազմով: Բաղկացած է 977 մեծադիր էջերից և գրված է բամբակի թղթի վրա, երկսյուն, սև թանձր թանաքով, բոլորգիր և սկզբից մինչև վերջը միևնույն գրչությամբ: Դա մեկն է հայ ժողովրդի հին մշակույթի ա'յն հազարագույն գրչագրերից, որ 1606 թվականին, Շահ-Աբբասի բռնի գաղթի ժամանակ, հայ գյուղացիները Հայաստանից իրենց հետ բերել են նախ Զարմահալի հայարնակ Ֆոխնդիգան գյուղը, ապա տարել Գիշնիգան: Այնուշենակ ձեռագիրը ճամբորդել է Մամուռան, Շահ-րուկաղ և դարձյալ Մամուռան հայարնակ գյուղերը: Այդ ճանապարհորդությունն ու թափառումներն ել դրեւ են իրենց քայլացի դրոշմը գրչագրի բովանդակության և գեղարվեստական կատուցվածքի վրա: Շրջելով գյուղից գյուղ և անցնելով արվեստից անհամար մի քանի գյուղացիների ձեռքը, ձեռագիրը գրկվել է իր նկարչական մի շարք գեղեցիկ էջերից: Այժմ ընդհանուր պատկերն այն է, որ պակասում են սկզբի, միշտ և վերջի շատ թերթերը: Նույնիսկ մի անբարեխիղ ձեռք կարել է հիշատակարանը, որով մթության մեջ են մնում գրչագրի պատմության շատ կարևոր էջերը: Միակ ուժիթարական երկուլիթը 512-րդ էջի երկսյուն գրության ներքո գրված երկտողն է: Դա փոքր, բայց թանկագին մի փաստաթուղթ է, որ ցայտուն գաղափար է տալիս ձեռագրի գրության ժամանակաշրջանի մասին: Ահա այդ արժեքավոր տողերը,

«Ի թի Հայոց ԶԵ (1456 թ.) գրեցաւ ի Զուղպայ, Ք[ա]ր[ո]լզգիրքս Գրիգորի Տարեացոյ»¹:

Այս էական հիշատակարանն էլ հաստառում է, որ ձեռագիրը գրվել է 15-րդ դարում, Հին-Զուղպայում: Թայց գրչագիրն առանձնապես արժեքավորվում է նրանով, որ գրիչն արվեստագետ մի հայ կին է: Դա ուշագրավ մի երեսով է 15-րդ դարի գրչագրական արվեստի պատմության մեջ: Անմխանելի է, որ Հնագույն շրջանում ունեցել ենք գեղագրության ձիրքով օժագած հայուններ, որոնք զարդ են տվել գրչության մշա-

թվականին Հալիձորի Սուրբ Կույս Աստվածածին վանքում արտագրել է «Մեկնութիւն Ժամագրքի», «Նարեկացի» և «Խոսրով Մեծ» ձեռագրերը: Հայ գրչագրության մի այլ համեստ մշակն է Կույս Վառվառը, որ 1655 թվականին արտագրել է «Ժամագրքիրքը»: Այս արվեստագետ հայունների շարքում առանձին էց է գրավում նաև Վարդենին, որ 1657 թվականին գրել է «Սանդրվատի գիրքը»: 1673 թվականը ձեզ տանում է Շնէերի վանքը, ուր քույր Էրինեն գրել է «Ատենի ժամագրքությունը»: Ահա և Փոքր Սյունյաց վանքը, ուր 1684 թվականին կույս Վառվառն արտագրել



1456 թվականին Հին-Զուղպայում գրված ձեռագիր Ավետարակի մահրանկարներից, գրծ նկարչութիւն Մարիամի:

Կույթին: Դրանցից հայտնի է Կիլիկիցի Հայունի Զարելը, որի մասին կարդում ենք. «Ի հին պատմութեան Սոսյ լուայ, թէ Բարձրաբերդցի Կոստանդին քահանայի դուստր Զապէլ Կոչեցեալն պաշտէր զմանը ուսամունս, և էր հմուտ ընթերցողութեան և արուեստին գրչութեան»:

17-րդ դարում, 1650 թվականին, հոչակվում է մի այլ համեստ գրչունի: Դա Մանիանն է, որ Արկոյ գյուղում արտագրել է «Վարք Հարանց անապատականաց»ը: Նույն դարաշրջանում փալյում է մի այլ վաստակավոր արվեստագետ հայունի: Դա քույր Հոփիսիմենն է, որ երեք տարի անց, 1653

է Գրիգոր Տաթևացու «Ճառնտիր քարոզները»: Գտենք նաև քույր Շուշանի կերպարը, որ Շոռատի Սուրբ Կույս Աստվածածին վանքում, 1664 թվականին արտագրել է պատմահայր Մովսես Խորենացու և Եղիշեի պատմությունը:

Ահա հայ ժողովրդի պարծանքը կազմող այս գեղագիր գրչունիների շարքում պատվավոր տեղ է գրավում նաև գրչագիր Մարիամը: Այդ հանգամանքն են ընդգծում ձեռագրի տարրեր էջերում արձանագրված սեղմ տողերը, որոնց պատկերն է:

«Զբագլմամելու յամ(ենալն)ի զՄարիամ անուն, որ միայն զանունս իմ և ո՛չ զիր և զննօղսն իմ աղաշեմ յիշեալ ի Տէր բարի կամաւր» (էջ 261):

1. Տես «Թագմավէպ», 1948 թ., թիվ 1-2, էջ 45-46:

«Այլ և ես մեղօք մածեալ և մոլորեալ ոգի Մարիամ սիրող բանի յերեսս անկեալ աղաւեմ զհանդիպողսդ զի և մեզ խնդրեցէք զթողութիւն ի յահեղ ատեան Քրիստոսի (էջ 433):

«Եւ զանպիտան Մարիամ գրիչս յիշել աղաւեմ վասն Աստծոյ. ո՞վ ոք հանդիպիք (էջ 645):

Այս հիշատակագրություններն էլ հաստատում են, որ ձեռագիրը գրվել է արվեստագետ Մարիամի գրչով:

Սակայն, գրչագրի գեղեցկությունը կազմում են մեկը մյուսից տարրեր ոճերով և

հու պայծառ դիմագիծը: Այդ հանգամանքը հաստատում է ձեռագրի 723-րդ էջի սեղմ. բայց թանկագին հիշատակարանը, ուր կարում ենք.

«Յիշեա Քրիստոս Աստուած զանպիտան գուղս Մարիամ ապաշխարողս և (զ)ձնուու իմ զ(հ)ոգեոր և զմարմնաւորսն և զամենայն երաշխաւորսն իմ. և գուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստծոյ մերոյ և նմա փառք յափեանս, ամէն»:

Այս տողերն էլ վերջնականապես պարզում են մի էական հանգամանք, որ ձեռագրի գրիչն ու գծագրիչն է Մարիամը: Դա



1456 Բվականին Հին-Զուղայում գրված ձեռագիր Ավետարանի մանրանկարներից, գործ նկարչուին Մարիամի:

բովանդակությամբ վրձինված մանրանկարները, որոնցից հատուկ ուշադրության արժանի է 16-րդ էջի խորանը: Դա նկարչական արվեստի մի գեղեցիկ ստեղծագործություն է, որը գրավում է ձեզ իր նրբությամբ և բանաստեղծական պատկերավորությամբ: Հնդգետներ նաև որոշ լուսանցքներում ձոխ երանգներով նկարված գեղեցիկ զարդանկարները, թռչնազարդերը և գեղագրերը, որոնք իրենց ինքնուրուցն ոճով, գոյնների ներդաշնակությամբ և գեղարվեստական որոշ նրբությամբ ձեռագրին առանձին գրավչություն են տալիս, միաժամանակ պարզում 15-րդ դարի Հին-Զուղայի նկարչական դպրոցի էությունը: Այդ մանրանկարներն այսօր առանձին արժեք ունեն նրանով, որ պատկերում են նաև հայ նկարչական պատմության մինչև օրս անձանոթ մի նկարչու-

15-րդ դարի առաջին կին նկարչուին է, որի վրձինի թանկագին մնացորդները հասել են մեզ և ցայտուն գաղափար են առաջի նրա ստեղծագործական ինքնուրուցն ձիրքի, արվեստի էության և ոճի մասին, մի արվեստագիտուհի, որն օժտված լինելով նկարչական հարուստ ավալներով, ձեռագիրը զարդարել է գեղեցիկ մանրանկարներով, որոնք ընդգծում են նրա հմուտ և ձևակերպված վրձինի մասին: Այդ նկարների շնորհիվ էլ արմօր մեզ հետ խոսում է 496 տարի առաջ մեզանից բաժանված տաղանդավոր նկարչունից, որ հանդիսացել է իր ժամանակի մանրանկարչական արվեստի լավագույն դրոշակակիրներից մեկը: Ահա թե ինչո՞ւ նա իր վրձինով ունի իր ուրուցն տեղը հայ մանրանկարչության, գրչագրության և գեղագրության արվեստուների պատմության մեջ:

